

ԻՏԱԼԻԱ ԵՒ ՎԵՆԵՏԻԱ

Ապէնինեան սարերը տարածվելով համանուն թերակղզու մէջ, Իտալիան բաժանում են *աբէ-լե-ա* և *աբէ-մբէ-ա* մասերի, որոնք միմեանց բոլորովին նման չեն։ Արևմտեան մասում թէ երկիրը լաւ մշակված է, թէ բուսականութիւնը ճոխ է և թէ վերջապէս այստեղ են գտնվում Իտալիայի նշանաւոր քաղաքները։ Արևելեան մասը ընդհակառակը պակաս է մշակված, երկրի մեծ մասը ծածկված է ճահիճներով և ծովափը շատ նեղ է։ Արևելա—հիւսիսային մասում ծովը դէպի ներս է մտնում և ճահիճների հետ միանալով, նեղոցներ և ջրանցքներ է կազմում։ Այդ լճերը մակընթացութեան և տեղատուութեան ներդործութեան տակ են գտնվում։ Մակընթացութեան ժամանակ լճերը լցվում են ջրով, իսկ տեղատուութեան ժամանակ ջրերը այնքան պակաս են, որ համարեա թէ մէկ օտնաշափ ջուր է մնում և այդ ժամանակ լճերից շատ փնասակար դուրրչի է բարձրանում։ Արևելեան մասում կլիման աւելի խիստ է և նշանաւոր քաղաքներ չկան։ Թերակղզու այս կողմի նկարագրութեան հետ աւելի կձանձմանանք Վենետիկը նկարագրած ժամանակ, իսկ այժմ արևմտեան մասի վերայ քանի մի խօսք ասենք։

Ճանապարհորդը Ալպերը անցնելուց յետոյ դէպի հարաւ գնալով, բոլորովին ուրիշ կենդանիներին և ուրիշ բոյսերին է հանդիպում։ Մէկ խօսքով բնութեան բոլոր պատկերը փոխվում է։ Այստեղի ժողովուրդը պարտիպանական կեանք է վարում, տնկում է, փորում է, կտրում է ծառերը և ժայռերի վերայ շինում է հողարլուրներ, Բաց դռներով տնկում, փողոցներում, պարտեզներում խաւացու բոլոր կեանքը ձեր առաջ է։ Թուխ մարդիկը գեղեցիկ վերարկուններով, սրածայր յարդկայ գզակներով, իսկ կանայքը սեաւ աղղու աչքերով, Նոցանից շատերը գլխին սպիտակ թաշկինակ ունին բազմաթիւ ծալերով, որոնք խալուհու երեսին մի առանձին աղղուութիւն են տալիս։ Աւելի հարուստները թաշկինակի փոխանակ մազերը քօղով են ծածկում։ Նոցանից խրաքանչիւրը անպատճառ պէտքէ օղեր կախէ ականջից, Բայց ամենից աւելի այստեղ զմայլեցնում են կիսամերկ, գերօրինակ ուրախ, թուխ, համարձակ երեսներով և խճողված մազերով մանուկները։

Տօսկանայի ծովեզրում գետաբերանների մօտ գտնվում են բազմաթիւ ճահիճներ, որոնք *աբէ-մբէ-ա* են կոչվում։ Բայց նոքա ամենեին չեն խանգարում բնութեան լաւ տպաւորութիւնը։ Այս ճահիճներից շատերը եղեգներով և կանաչով են ծածկված, բայց այս ճահիճները առհասարակ վտանգաւոր տեղեր են։ Երեկոյեան և առաւօտեան ժամանակ ճահիճներից բարձրանում են փնասակար թուխակեր։ Այս ճահիճների մօտ երբեմն պատահում են շափազանց պողաբեր տեղեր գեղեցիկ արօտատեղիներով, բայց խաւացիները բոլոր միջերկրականի ծովեզրը Լիվոռնօից մինչև Հոսմի սահմանը մարէմմաներ են կոչում։ Եւ այս մարէմմաները նոյն են նոցա համար, ինչ

որ Ռուսիայի համար Սիրիերը, Շատ քիչ տեղեր կարող են հաւասարվել մարեմմաների հարստութեան հետ: Այս ճահիճներից ստանում են մետաղների, օրինակ, երկաթ, կապար, սնդիկ, մարմարիօն, ծծումբ, իսկ մի քանի տեղերում ևս այդ մետաղները մշակում են:

Երկիրը իւր պտղաբերութեան համեմատ այնքան հարուստ չէ բուսականութեամբ, սորա պատճառը ղլխաւորապէս ճահիճներից բարձրացած վնասակար գոլորշին է, որը արգելք է լինում բնակիչներին շարունակ պտղատու տեղերը մշակել: Գահիճների պատճառով այստեղի օդը անառողջ է և ինչպէս ասացինք մարդիկ հաստատաբանակ կեանք չեն վարում: այդ իսկ պատճառով այստեղ շատ որսեր են գտնվում: Զնայելով որսորդների բազմութեանը նոքա այն աստիճան շատ են, որ ամենայն տարի ահագին վնասներ են հասցնում շրջակայքում բնակօղ գիւղացիներին: Վարազների մի ահագին խումբ մի գիշեր մի ամբողջ դաշտ է ոչնչացնում: Զնայելով շների հսկողութեանը գայլերի խմբերը շատ յաճախ յարձակվում են ոչխարների հօտերի վերայ, և մինչև անգամ նոյն իսկ բնակարանների մօտ են հասնում: Իւրաքանչիւրը քիչ շատ կարգի դնելով իւր գործը աշխատում են որքան կարելի է շուտով ձգել հեռանալ այդ կորստական երկրից, իսկ եթէ մի որեւիցէ պատճառ արգելք է դառնում այդ ցանկութիւնը կատարելու, այն ժամանակ գոնէ մայիս և յունիս ամիսներում աշխատում են այստեղից հեռանալ, որովհետեւ այդ ժամանակ այստեղի օդը աւելի վնասակար է: Զնայելով որ այստեղ բնակիչներ շատ քիչ են, այնու ամենայնիւ տարվան մի քանի ամիսներում այս երկիրներում հաւաքվում են շատ գործաւորներ: Տեղացիները չեն կարօղ իւրեանց ունեցած միջոցներով երկիրը մշակել, այդ պատճառով շրջակայ լեռնարնակները այդտեղ են հաւաքվում: Դեռ ևս դաշտերի բերքերը չհաւաքած Ապէնինեան սարերի հովիւները իւրեանց բազմաթիւ հօտերով և ահագին կատաղի շներով գայլիս են իւրեանց քաղցած հօտերը արածացնելու վարձած արօտատեղիների վերայ: Յետոյ գալիս են փայտահատները և հիւսնները, վերջապէս գալով ամխապորճները և կալաքար պատրաստողները շատացնում են ձմեռվան բնակութիւնը և ճահիճներին գործունեայ և գործաւորական կերպարանք են տալիս:

Բայց հազիւ թէ ամառը վերայ է հասնում, խրճիթները, որոնց մէջ նոքա բնակում էին, սկսում են դատարկվել և իւրաքանչիւրը աշխատում են օր առաջ իւր տունը հասնել. ամեն բան հանդարտում է, չեն լսվում ոչ կայնի հարուածները, ոչ սղոցի շիւնը, ոչ բանւորների խրախուսական ձայները և ոչ հովուի սրնդի տխուր ձայնը: Բայց և այնպէս ամառվան ամենատաք ժամանակներում, որ ճահիճների օդի ամենավնասակար ժամանակն է, այս տեղերը բոլորովին դատարկ չեն մնում: Այստեղի հունձի կրկնակի արդիւնքը գրաւում է շատ աղքատներին: Լնձողները իւրեանց կանանց հետ այստեղ գալով պարտական են ոչ թէ միայն իւրեանց ապրուստի համար անհրաժեշտ սղաշարը հետը բերել, այլև պարտաւորված են մէկ պարկ յարդ բերել գիշերը նորա վերայ հանգստանալու համար: Տար-

վան այս եղանակում այստեղի շուրջը մի քանի միոն հեռաւորութեամբ ոչ մի բնակարան չես կարող գտնել պատասպարվելու։ Եւ խեղճ աշխատանքներէ համար շատ թանկ է նստում այս կեանքը։ Ամանք քնումն բացօդեայ, ծառի ճիւղերից կամ յարդից պատրաստված հիւղերի մէջ, ամանք ևս իւրեանց անկողինները կախումն սիւների մէջ։ Արովհետեւ պատեղ թաւմ կերակուր չէ կարելի ձեռք բերել, այդ պատճառով նորա բոլոր ժամանակը կերակրումն աներից բերած չորացրած հացով և ոշխարի պանրով, որը իւրեանք են պատրաստում սարերում մեծ քանակութեամբ։ Օրը միանգամ նորա եփումն մի տեսակ ապուր որ պատրաստումն ջրից, աղից, խղից, պղպեղից և հացից։ Տաքութիւնը շատ անգամ մինչև Բէռլինի 40° է հասնում, իսկ գիշերվան ցօղը օդն է զովացնում։ Տաքութեան ժամանակ սաստիկ աշխատութիւնները ծարաւեցնումն, իսկ ծարաւը կատրելու համար նորա պէտքէ ճահիճների պղտոր և հոտած ջուրը գործածեն, որ լի է կենդանիներով և բոյսերով։ Շարունակ տաքութեան ժամանակ արևի կիզիչ ճառագայթների ազդեցութենից կանգնած ջրերն ևս դոյրչխանումն, այն ժամանակ օդի մէջ տարածվումէ բարակ և անտեսանելի բայց միևնոյն ժամանակ ամենայն տեղում զգալի թոյնը։ 2է թէ միմիայն այստեղ է գտնվում այդ թոյնը, այլ նաև Առնոգիտի բերանից մինչև Վալարրիայի սահմանները, բայց ոչ մի տեղ այնքան վտանգաւոր չէ, որքան որ Տօկանայի և Պոնտական ճահիճներում։ Նորա երեւելուն պէս տարածվումն զանազան հիւանդութիւններ։ Յունիս և յուլիս ամիսներում բնակիչները չարշարվումն ընդհատական տենդով, օգոստոսի և սեպտեմբերի մէջ ջրային հիւանդութիւններով, հոկտեմբերի մէջ ստամոքսի հիւանդութեամբ։ Հիւանդները սովորաբար կէսից աւելի են։ Հոկտեմբերի վերջերում, երբ սկսվումն սաստիկ անձրևների, թոյնը անհետանում և հիւանդների թիւը պակասում։

Դժբաղդ գործաւորները գեռ ևս գործի կէսը չվերջացրած բռնվումն սաստիկ տենդով և մնացած աշխատութիւնը դողդոջիւն ձեռներով են կատարում։ Ս. Լալբէնտիտսի օրը, այսինքն օգոստոսի 10ին, նիհարացած, տանջված և շատ անգամ ևս մահացու հիւանդութիւններով ծանրացած աշխատաւորները վերադառնումն տուն։

Պատմութեանը նայելով այս տեղերը հին ժամանակ բնակումը քաղաքակիրթ և գործունեայ ժողովուրդ։ Այս բանը հաստատումն բաղմամբիւ ձիթենիները, հին ժամանակ բացված հանքերի հետքերը, հին ճանապարհների, էտրուրեան պատերի, ամրոցների, դռների ամֆիթատրոնների, դրամների մնացորդները և մի քանի մեծ քաղաքների մինչ այժմ պահպանված անունները, որոնց տեղը այժմ հազիւ թէ գտնվումն աննշան գիւղեր։ Բայց երբ Հռոմայեցիների նաւաճումից յետոյ էտրուրեան քաղաքակիրթութիւնը ընկաւ, երբ ներքին պատերազմները երկիրը աւերեցին և բնակիչները ցրուեցին, բարբարոս ցեղերը մանկով նոցա երկիրների խորքերը այրեցին քաղաքների, գիւղեր, այդ ժամանակից սկսած ճահիճները սկսեցին անմարդա-

քնակ անապատներ դառնալ։ Բայց ինչպէս երևումէ, այն ժամանակ ճահիճներից բարձրացած գոլորշին այնքան քնասակար չէր, որովհետեւ շատ ժամանակ այդ երկիրներին մէջ զինուորներ բանակուեմէն։ Աւերիչ հիւանդութիւնները այն ժամանակ սաստկացան, երբ Ասնո և Ապենինեան սարերի արեւմտեան զառիվայրերից սկիզբն առնող բոլոր գետերը ափերից դուրս դալով տիղմ և ջրի մի մասը թողնուեմէն փոսերի մէջ։ Թոյնի տարածման զլիաւոր պատճառը ճահիճների կանգուն ջրերն էին, որտեղ հոտում են ճահճային բոյսերը։

Թողնելով ճահիճները անցնենք դէպի հարաւ։ Ճանապարհորդը շարունակելով ճանապարհը դէպի հարաւ, ճահիճներից հեռանումէ և հետզհետէ նորա աչքերի առջ բացվումէ խալական գեղեցիկ հարուստ և միշտ ծաղկած բնութիւնը։

Այստեղ արդէն ամեն քայլափոխում նորան պատահումն հարաւային սօսիները, որոնք իւրեանց հովանած և զուխները բարձրացնումն կապոյտ երկնքի մէջ, և հսկայ մութ կանաչ նոճին։ Այս երկուքն ևս հարաւին յատուկ ծառերից են։ Յետոյ շարունակվումն տրմաւենիները տարածված գագաթներով, դարնիները, մրտենիների թփերը, ելակները մութ կանաչ տերեւներով և կարմիր պտուղներով և այլն։ Այս բոլոր բոյսերը ձմեռը աւելի կանաչ են լինում քան թէ ամառը։ Այստեղ տարին չէ բաժանվում կենդանի և մեռած մասերի, ինչպէս մեղանում և կարելի է ասել, որ այստեղի բոյսերը ամառն աւելի թառամած են քան թէ ձմեռը։ Թէև հարաւային Իտալիայում կան այնպիսի ծառեր, որոնք թէպէտեւ ձմեռն իւրեանց տերեւներից զրկվումն, բայց և այնպէս մեր ծառերի նման մերկ չեն մնում։ Մութ կանաչ փաթաթուկ այնպէս խիտ է փաթաթվում նոցա բազմաթիւ բուռներին, որ այդ տեսակ ծառերի մէջ զբօսնողը կարծումէ թէ կանաչ սիւներով զարդարված դահլիճի մէջ է գտնվում։ Ծաղիկները բազմաթիւ և չքնաղ են այնպէս որ ճանապարհորդը չէ կարող անուշադիր լնդնել քարերի մէջից դուրս ցցված գոյնզգոյն ծաղիկների փունջերը, Գլխաւորապէս գարնան զուարթացուցիչ անձրևներից յետոյ, դաշտերը և բլուրները ծածկվումն գոյզգոյն գորգով, որի վերայ փայլուն թիթեաները մէկ ծաղիկից միւսի վերայ են թռչում։ Իտալիայում բոյսերի ախորժիկ հոտերը անհամեմատ սաստիկ են քան թէ միջին և հիւսիսային Եւրոպայում։ Իտալիայում կան եղանակներ և տեղեր, որտեղ ամեն բան գրեթէ խեղդումն անուշահոտութենից և իւրաքանչիւր հովը լցված է անուշահոտութեամբ։ Եթէ մի որեւիցէ տեղեւ կամ ծաղիկ ձեռով բռնես, նորա անոյշ հոտը երկար ժամանակ մնումէ ձեռների վերայ։ Ար կողմը որ գնաք, թէ սարերի թէ դաշտերի մէջ, թէ գերեզմանատանը և թէ բոլորովին ամայի բակում, ձեր հոտոտիկը միշտ զգումէ օդի մէջ գտնված ծաղիկների քաղցր և անոյշ հոտը։

Այս բոլորից յետոյ ընթերցողը հնչող կհասկանայ, եթէ որ մենք ասենք թէ այս բազմաթիւ բոյսերից պատրաստումն անուշահոտ ջրեր և եթերական իւղեր, Այստեղ գտնվումն և բժշկական բոյսեր, Ի հարկէ այսպէս

զանազան տեսակ բոյսերով հարուստ երկրում բայի բժշկական և անուշահոտ ծաղիկներից, Բաալիայի երկիրը բուսցնումէ նմանապէս շատ տեսակ թուխաւոր բոյսեր, որոնցից պատրաստված բոյսերը աւելի ազդու են քան թէ հիւսիսային երկիրներինը։ Եւ ահա այս է պատճառը, որ հին ժամանակ Բաալիայում յատկացան լաւ թոյն պատրաստողները։

Բաալական շատ բոյսերը իւրեանց մէջ պարունակումեն ներկեր, ոմանք արմատների մէջ, ոմանք տերեւների մէջ, որոնցով խառնական օրիորդներ և կանայք ներկումեն իւրեանց շորերը, ձրկնագոյն, կարմիր և դեղին գոյներով։ Այստեղի ժողովուրդը իւր զգեստները գլխաւորապէս ներկումէ պայծառ գոյնզգոյն ներկերով։ Ժողովրդի այս սովորութիւնը կարելի է բացատրել նոցա շրջապատող բնութեամբ։ Երկիրը պարզ, բոյսերը զանազան գոյներով առատ ներկեր են տալիս, արդէն հասկանալի է որ ժողովուրդը բնութեանից օրինակ առնելով գոյնզգոյն ներկված շորեր է սիրում հագնել։

Բաալական բոյսերը այնքան սննդարար են, որ կարելի է ասել, նոքա են գլխաւորապէս ժողովրդի կեանքը պահպանում։ Բոլոր արգանակները և աղօրնները նոցանով են համեմվում, միմիայն նոցանից են պատրաստում շատ տեսակ կերակուրներ, որոնց հում են ուտում։ Իսկ աղու, քացախով և ձէթով համեմված սառն սալագները Բաալացիների ամենասիրելի կերակուրներն են։

ՎԵՆԵՏԻԿ

Շոքենաւր մանումէ Ադրիական ծովի ճահիճների կանաչ ջրերի մէջ, որոնց վերայ կանգնած է Վենետիկը, և ճանապարհորդին ներկայանումէ մի բոլորովին առանձին տեսարան, որ երբեք տեսած չէ եւրոպական մի որևիցէ քաղաքում։ Այժման հետոյ որչափ որ աչքը կտրումէ նորա շուրջը բոլորը ծով և աւաղ է, ոչ բոյսեր, ոչ ծառեր . . .

Որքան որ կարգացած լինիս նկարագրութիւնների, որքան որ լսած լինիս պատմութիւնների, բայց ով առաջին անգամ տեսնումէ այս քաղաքը, չէ կարող չհիանալ նորա ինքնուրոյնութեամբ։ Անգլիական բանաստեղծ Բայրոնը գուր չէ անուանում Վենետիկը Ադրիական ծովի գեղեցկուհի, իսկ ուրիշ անուանի գրողը նորան համեմատումէ ծովի մէջ խարխաւ ձգած մարմարիօնեայ պալատներով նաւատորմիդի հետ։ Բոլոր այդ ծովի մէջ լողացող շինութիւնները, իբրեւ ծովային մեծ բոյսեր կպած են աներեւոյթ, հարթ, աւազոտ փոքր կղզիներին—և այս պատճառով ևս այս բոլոր շինութիւնները կարծես թէ ուղղակի՝ ծովից են դուրս եկած։ Շատ անգամ շինութեան մօտ մի փոքրիկ կտոր հող ևս չէ լինում, այնպէս որ Վենետիկցին տնից դուրս գալու ժամանակ ստիպված է ուղղակի նստել գօնդօլա կոչված փոքրիկ նաւակների մէջ, որոնք անհամար թուով անցուդարձ են անում քաղաքի ջրային փողոցների մէջով։ Սալայատակների փոխարէն, որոնց վերայ այնպիսի զգրվիւնով և աղաղակներով վազվզումեն կառքերը, բաղխումեն անիւները և անցուդարձ անողների կրունկները,—այստեղ բա-

լորը հանդարտ է։ առանց մի որևիցէ ձայնի գոնգօլանների մէջ նստած անցու-
ղորձ են անում։ Այստեղ ամեն բան չափազանց ինքնուրոյն է։ թէ շի-
նութիւնների հիանալի ճաշակով ճարտարապետութիւնը, որոնք թրջ-
վումեն ծովի կապոյտ ակիքներով, թէ Աննետի կապտագոյն բանաս-
տեղծական երկերը, և թէ վերջապէս այս անսովոր լուսնիւնը այսպիսի
մեծ քաղաքում։

Աննետիկը սերտ կապված է իւր պատմական յիշատակութիւնների հետ
և նորա այժմեան բոլոր նշանակութիւնը նորա անցած կեանքին ընծայած
յիշատակարանների մէջ է։ այնպէս որ այդ քաղաքի վերայ խօսել բոլորս-
վէն անկարելի է։ առանց յիշելու նորա պատմութիւնը, գոնէ ամենահա-
մառօտ կերպով։

Աննետիկը այն ժամանակ գոյացաւ, երբ զանազան աշխարհակալներ
յարձակումէին Բտալիայի վերայ։ Այն ժամանակ նորա բնակիչները
թշնամիներից ազատվելու համար, ծովեզրեայ աւազոտ կղզիների վերայ էին
ապաստանում։ Ի հարկէ ակիքների մէջ մի այդպիսի մարմարիօնեայ քաղաք
շինելու համար հարկաւոր էր մեծ գումար փող, շատ գիտութիւն և որ
ամենից զխաւորն է աշխատութիւն և համբերութիւն։ Ամենից առաջ
պէտք էր բնութեան հետ պատերազմել։

Եղեգնեայ խրճիթները, որոնք սկզբում շինված էին այժմ Մեծ Զբանցք
կոչված Բռնետա առուակի ցած և տղմուտ ափերի վերայ, շատ անգամ
մակընթացութեան ժամանակ ակիքների տակ էին փշանում։ Անհաւատալի
աշխատութիւններ գործ դրին Աննետի անդադար ջրերով ծածկվող հողը
ամրացնելու համար։ Աղբիական ծովը շատ անգամ բնակիչներով
լրված կղզիները կլանեց այնպէս որ Աննետիկը իւր Հերկուլան և իւր
Պոմպէա քաղաքները ունի, բայց նորան կլանողը լաւան չէր, այլ ծովի
ակիքները։

Զրառուղված կղզիների հետքերը մինչև այժմ երևումեն ծովի տակ
գտնված փլատակներից։ Միայն Փ.Զ. դարի վերջում Աննետիկը այն ա-
ռանձին հոյակապ կերպարանքը ստացաւ, որով զանազանությունն նա ամեն
քաղաքներից։ Այդ ժամանակից սկսած քաղաքը հետզհետէ սկսեց ընդար-
ձակվել և հարստանալ, որովհետեւ բնակիչները անդադար աշխատումէին
նորան զարգարել շինութիւններով, բացի դորանից ծովեզրը առևտուրի
համար շատ յարմար էր։ Այս և այն կողմ ջրված կղզիները շուտով մի-
մեանց հետ միացան գեղեցիկ կամուրջներով, որոնցից ամենագեղեցիկը
Ռիալտօ կոչված կամուրջն է, որ մինչև այժմ պահպանված է, այլև նշա-
նաւոր հարուստ և գեղեցիկ մարմարեայ պալատներով և եկեղեցիներով
ծածկվեցան։ Գոցանից մինչև այժմ գտնվող ս. Մարկոսի տաճարը և
Գոթերի պալատը Աննետի համար իբրեւ ամենառաջին արժանաշիշատակ
յիշատակարաններ են։

Աննետիկցիները շուտով այնպէս հզօրացան, որ կարճ ժամանակում
յունական արքիպիսկոպի մի քանի կղզիներին օրինջին և Աղբիական

ծովի տրեւեղան տփի մասերը (Գալմատիան) ձեռք բերին։ Ահա որտեղից յառաջացան այս բիւզանդական զմբէթները, որոնք մինչեւ այժմ փայլում են։ Յառաջագոյն Վենետիկը հասարակապետական կազմակերպութիւն ունէր, բայց խիստ արիստոկրատական, բոլոր իշխանութիւնը հարուստ և նշանաւոր մարդիկների ձեռին էր։ Նոցանից առաւել անուանի անձներից ընտրւում էր Ծայրագոյն Խորհուրդը, որն անսահման իշխանութիւն ունէր։ Նոյնպէս ազնուապետներից էր ընտրւում Տասների Խորհուրդը, որի ղեկավար պարտքն էր իմանալ, և թէ կան որեւիցէ դաւաճան խորհուրդներ ազնուապետների իշխանութեան դէմ և նոցա առաջն առնել։ Հասկանալի է, որ դորա համար հարկաւոր էր շատ լրտեսներ ունենալ։ Այս մարդիկը կամենալով գերազանց հանդիսանալ և աւելի պարգևներ ստանալ, միշտ միմեանց նախանձումէին, և նոցանից իւրաքանչիւրը կամենում էր աւելի հրամուտ կերպով տեղեկանալ այս կամ այն ընտանիքի գաղտնիքներին։ Եւ իբրաւ շատ անգամ, հաղուստները փոխած կամ ամենախորամանկ կերպով մտածված բոլոր միջոցները գործ դնելով բարեկամութիւն էին հաստատում այս կամ այն տան հետ։ Անտանի խօսակցութեան ժամանակ նա աշխատում էր կառավարութեան վերայ խօսելով, նորա վատ կողմերը ցոյց տալ։ Պատահում էր, որ մի կրակոտ երիտասարդ, տեսնելով ժողովրդի քաջածխեղծութիւնները և կառավարութեան քմահաճոյ գործերը, որոնք նոյն իսկ լրտեսն էր նորա առաջ բերում, սաստիկ բարկանալով սկսում էր ազնուապետներին հայհոյել, և ահա լրտեսը այդ միամիտ երիտասարդին մատնում էր երեք ղեկավար գաղտնի գործերի քննիչներին (ինկվիզիտորներին)։ Տասների Խորհուրդը այդ քննիչներին իւր մէջից էր ընտրում, որոնք գաղտնի դատաստան էին կազմում։ Վասկաճաւորը յանկարծ անհետանում էր և ոչ ոք չէր իմանում թէ ուր գնաց և ինչ եղաւ և ոչ ոք չէր համարձակում նորա վերայ խօսել։ Ամենքը գուշակում էին, որ նորան տարած են գաղտնի քննութեան մութ բանտերը, որտեղ նորան սպասում էին տանջանք և յաւիտենական բանտարկութիւն կամ գաղտնի մահ։

Բացի բարձրագոյն խորհրդից և Տասների խորհրդից, կար նոյնպէս մի բարձրաստիճան պաշտօնակց—գոթ (այսինքն զուքս) որին ընտրում էին ցմահ։ Գոթը սկզբում, թէև սահմանափակ, բայց բաւական ընդարձակ իշխանութիւն ունէր իւր ձեռին, սակայն վերջը նորան միայն արտաքին պաշտիւր լծողին, այն է հիանալի պալատը, թիկնապահները և թաղը։ Միևնոյն ժամանակ գոթը իւրաքանչիւր տարի հանդիսաւոր նշանադրութիւն էր կատարում Ադրիական ծովի հետ։ Նշանակված օրը խուռն բազմութեան հետ թանկագին զարդերով զարդարված Բուցկնտավը նաւով, գոթը քաղաքից զուրս էր գնում, նորան ուղեկցում էին բազմաթիւ նաւակներ, և զանազան հանդէսներից յետոյ ոսկեայ մատանին ձգում էր ծովը։

ԺԴ. զարում Վենետիկի գոթերից մին, Մարինո Ֆալիէրի անունով, կամեցաւ արիստոկրատների բռնութիւններին վերջ դնել, բայց նորա խորհուրդն յայնմեցաւ և նորան սպանեցին իւր սեփական պալատում։

Վենետիկի ահա այս անցած կեանքն են նկարագրում զգալի կերպով ճանապարհորդին իւրաքանչիւր քայլափոխում պատահող յիշատակարանները Վենետիկում:

(Երաւանահայկէ):

ՃԷԺ. Ե. ԴԱՄԱՆ. Խ. Զ.

Ե Ր Ե Ք Հ Ո Պ Ի :

(Երկու ճամբարներէ մէջ):

Վեց տարին արդէն լրացաւ ինչ որ ես ուսումնասիրումն էի բարձր փիլիսոփայութիւնն Հելլէնիզմի համար: Ո՞վ չգիտէ, թէ ի՞նչ է նշանակում համալսարանական կեանքը: Բաց ազատ կեանք, կեանք արխատօկրատներով: 12 ժամին հազիւ վեր ես կենում, ծխումքս ծխաքարչոյ խմումքս երկու կամ երեք բաժակ շնապս, և բաճկոնիդ կոճակները կապելով մինչև կոկորդոզի գլխարկդ մի կողմ դարձած, հանդարտ գնումքս երեւելի պրոֆէսոր հազէնկօպֆի դասախօսութիւնը լսելու: որը մանրամասնաբար գննումքս մտաւոր տեսութեան և փորձերի վերայ հիմնված գաղափարներ: Եւրաքանչիւրն ազատ էր լսելու, յօրանջելու և մինչև անգամ քննելու, եթէ կամենար:

Գասը վերջացաւ. ամենքը խմողին գնումքն զէպի Թագաւորի շէնքէն կոչված գարեջրանոցը: Ամենքը սեղանի նստեցան, գեղեցիկ աղախինները սեղօնատով պատումէին սեղանի շուրջ ձեռներին բռնած երիշու կով լի ամաններ, ապուխտ և կտրուկ գարեջուր: Եւ երգումէին Շիլլէրի «Ան-շէնքէն» երգը, խմումքն ուտումքն և երգումքն: Մէկը սուլումէ, միւսը կանչումէ իւր շնիկը, երրորդը միճումէ, միւսը կուռումէ: Գործը այնտեղ է հասնում, որ բաժակները թափվումքն, սեղանները դողումքն: Գալիս է ստախկանութիւնը, ում հասնումէ բանան է գնում, և շատ անգամ ստիպված են եղել բանտում գիշերել:

Բայց օրերը, ամիսները և տարիները թոշումքն և թոշում: Հելլէնիզմի համար պատահումքն կոմսեր, բարոններ և իշխաններ, լինումքն և կոչկանքներ կառակներ: Արխատօկրատները առանձին դաս են կազմում, իսկ մնացած ամենքը մի ամբողջ ընտանիք են կազմում:

Իմ 32 տարիս արդէն լրացել էր և մօրուքիս մէջ երեւումէն սպիտակ մազեր, ծխաքարչոյ գարեջուրը և թթու կաղամբը կորցրին արդէն իւրեանց հիացուցիչ արժէքը, ցանկալի էր փոփոխութիւնն: Հազէնկօպֆի դասերի մասին այսքան միայն կարող եմ ասել, որ նորա իմաստութիւնները և վերլուծութիւնները, նորա մտածողական, նկատողական ըմբռնմաների, սպայոյցական և հրահանգական ճշմարտութիւնների քննութիւնները յազեցրին ինձ մինչև սրտիս խոռները: գլխումս ամենայն բան խոռնվեցաւ: Ինձ թուումքր որ ես գիտութեան գաղանիքը ծանաչեցի այն է ex nihilo nihilo (ոչնչից կի՛նի ոչինչ): Յաճախ ձեռներս շփելով և տարակուսած կրկնումէի. Ո՞չ Գասպար Յան, անօրուս է շատ գիտութիւնը, բնութիւնը զրկվումէ իւր գեղեցկութիւններից, եւ այն ժամանակ ողբալու է գառնում: